

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

— ԲՈ.ԽՈ.ՍԻՐՈ.ԿՈ.Ն - ԳԻՏՈ.ԿՈ.Ն - ԲՈ.ՐՈՅՈ.ԿՈ.Ն —

ԹԱՅԻ - ԹԱՅԵ

ՀԱՅՈՐ

ԶԴ

Ս. ՀԱՅԱՐ

1927

ՑՈՒԼԻՆ

ԹԻՒ 7

ԲԱՆԱԱԱԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՅ ԲԱԺԱՆՈՒՄՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻԿԵՆ

ՏԱՅՆՈՒՉՈՐԸ դարեր անցեր են այն տեղեկութիւնը ուրիշ բան չեն, բայց կահ-օրէն՝ ուր Հայք իրեցին իրենց կրօնական խակալ տեսութեան մը տարափոխիկը՝ որ կ'ընթանայ զսրէ զար ու կը հասնի մինչև մեր օրերը, սրողելով աշքերէ հարցին ոչ միայն վարդապետական, այլ պատմական մասն ալ, և ինանգարելով անոր վերա- բերեալ ժամանակակից յիշառակարաննե- րը՝ որոցմէ պիտի առնուինց իսկական լոյսը: Որով ինձ կը թուի օգտակարա- գոյն ծառայութիւնը մատուցանել մեր ե- կեղեցական պատմութեան, մաքրելով այդ ազրիւները, և ինդիրը զնելով իւր իրա- կան պատկերին: մէջ:

Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ յու- զուած մեծագոյն ու զործնականապէս կա- րեռագոյն խնդիրն է այս, որ հակառակ այնցան ընդարձակ տեղ, գրաւելուն մեր հին ու նոր մատենագրութեան, մէջ, տա- կաւին գրեթէ անծանօթ մնացած է հայ ժողովրդեան, և բուն հարկաւորը զեռ չէ ըստուած անոր մասին: Հիներու տուած

Ա. — ԲԱԺԱՆՈՒՄՆԵՆ ՑԱՌԱՋ

Կրօնական խզումը կը պահանջէ՝ որ հայ եկեղեցին տարրեր վիճակ մ'ունենար անջառուելէն յառաջ՝ բան զոր անեցաւ



յետոյ։ Այս վիճակն է՝ զոր հարկ է նախի թառ դնել, զգալի բնելու համար նախը ընթաց և հետեւրդ պայմաններու տարրերութիւնը։ Վասն զի զաղափարաց իտառնակութիւնը՝ որ կը տիրէ հայ եկեղեցւոյ սկզբնաւորութեան շուրջ, պէսպէս և աղիկամի ձևերու ներքն ներկայացուցած է նաև անոր վիճակը բաժանումն յառաջի։ Մէն՝ որ նախորդ զինոց մէջ պարզեցինք անոցեր ծագման և նույիրապետութեան հարցը, այժմ աւելի յստակ կերպով կրնանք զննել նաև անոր ընդհանրական նկեղեցւոյ հստ նախկին կցորդութեան հանգամանքները, որոնց հաստատուած էին Եկեղեցւոյ աւետարտնական նկարագրին վրայ։ Հարկ է ուրեմն որ հոռորոտագծեմ նախ այդ նկարագրը, ինչպէս Յիսոսու կազմեր և բրիտոննէութիւնը հասկցեր էր։

Ա. — 1. Գրիսոսու իւր մարդկութեան նպաստակ դրած էր՝ ամրող մարդկութեան փրկութիւնը։ «Եկի, ըստ, զի փրկեցից զայիսարհ¹»։ Այդ՝ գրիկագործութեան առաջին պայմանն էր տիեզերական համերշխանութիւնը, որպէս զի մարդկի իրարու ձեռք տուած դիմէին նոյն գերազոյն վախճանին։ Նորածին Փրկչին մարոյն վերե անդամանիկ երկնականչիւն պատգամ եղաւ, «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ համու րիսէ²»։ և Յիսոսու վերջին կոտակն եղաւ իւր հետեւողաց, «Խաղաղութիւն բողոք ձեզ, զիս զայտորին զիմ տամ ձեզ»։ Ինչ բան կընար ապահովել խաղաղութիւնը, եթէ ոչ փոխաղարձ սէրը, զոր Յիսոսու, ինըն իսկ Մէր, իւր նոր ու չընազ պատուիրանն ըրաւ։ Ըստեղով. «Պատուիրան նոր տամ ձեզ», զի սիրիցէ զմիմեսիս»։ ոչ սովորական մարդկային բարհացակամ ընտանութեամբ մը, այլ իւր տա մարդիկ սիրոյն պէս։ «որպէս սիրեցի ես քձեզ»։ իւ այս պատուիրանիս պահպանութիւնը դրաւ միւսկ յայտարար նշան իւր աշակերտութեան՝

ըսելով. «Յայսմ գիտացեն ամեններեան՝ եթէ իմ աշակերտը էր, իր սիրիցէ զմիմեան»։ Այնպէս խոր ըմբռնած էին իւր տապեսալը այս պատուիրը, որ Պօղոս առանց սիրոյ անօգուտ հոչակեց լենաները շարժող հաւատը և Աստուծոյ համար խարուկի վրայ մարմույն ողջակիզումը զիմովին։ և Կնքեց՝ թէ օրինաց ծայրագոյն աստիճանն է սէրը։ «Լյուսն օրինացն սէր է»։

2. Խաղաղութեան ու սիրոյ պատուղը պիտի լինէր՝ հաւատացելոց ներքին և արտաքին սիրութիւնը, այնպէս ինչպէս էր Յիսուսին իւր Հօրը հետ, որուն կ'ազթիր վերանալէն յառաջ, որ իւր հաւատացեալը «Եղիցին մի՛ որդու և մեր մի մեր՝»։ և զոր առաքեալը կ'ընդունէ այսպէս։ «Փութալ պահել զիմարանուրին Հոգուն յօդիւ խաղաղութեան, մի մարմին և մի նոցի, որպէս և կոչեցարուց ի մի յոյս կոչման ձերոյ»։ Այս միութիւնը կը հաստատէր Գրիսոսու՝ գրիկութեան սահմանուած ամրող մարդկութեան մէջ, ուրուով պիտի կազմէր իւր Եկեղեցին ('Եկալեօւչ'), իւր մեծ՝ համաշխարհական ժողովը։ Այս իսկ էր իւր խաջին գերազոյն վախճանը. պիտի մեռնէր, կ'ըսէ աւետարանիչը, «զի դրյիսն Աստուծոյ զցրունարն ծոդովնեցէ ի մի՛»։ բոլոր մարդկի ի միասին հաւաքէ, իրարու հետ կապէ, և իւր աշակերտաց պատուիրեց՝ «Գնալ աշակերտել զամենայն հերանոս³», ոչ մէկ ազգ զուրս չթողլով այդ մրութիւնն։

Ինչ բան էր որ ցրուիր էր Աստուծոյ որդիքը, եթէ ոչ՝ զիմարուրապէս ցեղային ու կրօնական խարութիւնները, որ էիրածուած ու թշնամութիւն ձգիր էին ազգերու մէջ։ Յիսուսի աւետարանը կը ջնջէր այդ խարութիւնները, և բոլորը կ'եղրայրացնէր ու հաւասար աստիճանի վրայ կը զնէր աստուածպաշտութեան ասպարիզին մէջ։ «Չիք խորի, կը զոչէր Պօղոս Պա-

1. Յ. Ժ. Ժ. 47. — 2. Ղ. Ա. Բ. 14. — 3. Յ. Ժ. Ժ. 27. — 4. Յ. Ժ. 84-35. — 5. Ա. Կոր. Ժ. 2-3. — 6. Հում. Ժ. 10. — 7. Յ. Ժ. Ժ. 11. —

8. Եփե. Դ. 8. — 9. Յ. Ժ. Ա. 52. — 10. Մ. Բ. 18.

դատացւոց, ոչ ձերի և ոչ հերանոյի, ոչ ծառայի և ոչ ապատի, ոչ արուի և ոչ իշի, զի ամեներեան դար մի էր ի Քրիստու Յիսոսն»։ և որոյ վրայ կը պնդէր կողասացւց ես, յանձնաբարելով մերկանալ հին մարդոց և զգենուլ նորն՝ «ըստ պատկերի արարչին իրոյց», որ մարդ ստեղծեց՝ «չ ազգեր, և «ուր ոչ է Հինա և ոչ հնրանոս, րիփառորին և անրիփառորին» (որ են կրօնական տարրերութիւնը), խոժ դուժ, սկիրացի, ծառայ, պատ, ոյլ ամենայն և յանձնայնի Քրիստոս»։ Քրիստոնէութիւնը կը ջնջէր՝ «չ անշուշտ ազգակցութեան ընդարոյս կապը, որ կը կազմէ ընտանիքներ ու ցեղեր, այլ աղոր չարաչար զործածութիւնը, ուսակց կը ծագէին արինանութ թշնամիթիւնը ազգերու մէջ։ և կը բառնար կրօնական զանազանութիւնները՝ որ անոնց հալածել կու տային զիրար: Ցեղերուն ներոն ալ կը մանէր ու կը գտարէր այն հոգին՝ որ ընկերութեանէն զումանն կը ստրկացնէր այլոց քմահաճ բռնութեանց։ Եւ հուսկ կը բարձրացնէր կինը իւր արհամարի վիճակն, և կու տար անոր պատշաճ զիրցն ընտանեաց և լնկերութեան մէջ։ «Քանզի, կը պատճառարանէ նոյն առաքեալը, միով Հոգուվլ մեր ամեներեան ի մի մորմին մկրտեցար (այսինքն մկրտութեամբ մէկ մարմին եղանք), եթէ Հրեայը, եթէ հեթանոսը, եթէ ծառայը, եթէ ազատը, ամեներին զմի Հոգի արրար»։ Եւ այսպէս Եկեղեցին կը դառնար համաշխարհական ու կազմակերպեալ ընկերութիւն մը, որոյ բոլոր անդամները սիրով, դաւանութեամբ ու բարյական հաւասարութեամբ կապուած էին իրարու, աւելի ուժգին քան ազգայնական կապը. իրեք մէկ ընտանիք, «ընտանիքի հաւատոյ»։ Եւ էին ու կը կոչէին զիրար՝ նոյն ինքն քրիստոնէութեան իսանձարբէն՝ եղայր և քոյր, աշխարհիս որ կողման ալ զանուէին։

1. Գաղ. Գ, 28. — 2. Կողոս. Գ, 10. — 3. Ա. Կոր. ԺԲ, 18. — 4. Գաղ. Զ, 10. — 5. Ա. Պ. ԺԲ, 50. Ա. Կոր. Է, 15. Յակ. Բ, 15 ևն. — 6. Եփես.

3. Այդ տիեզերական միութիւնը, այդ քրիստոնէական միծ բնուանիթը՝ հաստատուած էր երրեակ հիմնրու հաւասարութեան վրայ՝ ըստ առաքելական սահմանին. հաւասարութիւն պաշտելի գերագոյն էակին նկատմամբ. «մի Տէր». հաւասարութիւն քրիստոնէական հաւասարակաց ամբողջութեան մէջ. «մի հաւատոյք». և հաւասարութիւն իշեցւոյ սուրբ և զմարդ սրբութեան մէջ հաստատող խորհրդոց մէջ. «մի մկրտութիւն»։ Զի նա՝ որ «ճանապարհ և ճշմարտութիւն և կիանք» էր, մի միայն ճանապարհ գրկութեան, մի միայն ճշմարտութիւն հաւատոյք, և մի և նոյն կենզանաբար միջոցները կրնար ցոյց տալ իւր հնաւողաց, և ոչ թէ մոյն այս, միւսին այն, որով պիտի հակասէր ինքն իրեն և եղծանէր իւր զործը։

4. Սակայն ինչպէս պիտի կարենար պահուիլ այդ միութիւնն աշխարհասփեռ քրիստոնէութեան մէջ։ Թողով իւրաքանչիւրը՝ «Երթալ զհետ կամաց սրաբից իւրեանց», որ աստուածային պատիժ մ'էր։ Ոչ, այլ հաստատուն կապ մը հարկաւոր էր անոնց մէջ։ Աշխարհիս վրայ ամէն ազգ, զաւառ, վիճակ կամ ընկերութիւն, և մինչև անգամ փոքր ընտանիքն իսկ միութեան կեղրոն մ'ունին, առանց որոյ պիտի չապրէին ու ցայքայուէին, Քրիստոս ալ, որ ցաջ կը ճանաչէր մարդկային նշարագիրը, տեսաւ նոյնպէս իւր Եկեղեցւոյ մէջ միութեան կեղրոնի մը պէտքը, և ինքն իսկ նշանակեց զայն, իւր ազատ ընտրութեամբ՝ զոր ունէր իրրեն հիմնագիր Եկեղեցւոյ, յանձնին իւր ամենէն եռանդնոտ աշակերտին։ Պետրոսի Երր օք մ'իւր հարցման վրայ՝ նա աշակերտակցաց առջև զաւանեցաւ իւր աստուածութիւնը, Յիսուս գարձաւ երանեց, և այս հանդիսական խոսութեան ըրաւ անոր. «Դու ես վեն, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկողեցի իմ»։ Եւ կանխեց փոխեց անոր

Դ, 5. — 7. ՅՇ. Դ, 6. — 8. Ա. Պ. Զ, 13. — 9. Ա. Պ. ԺԲ, 18.

անունն ալ, ու վէմ (երբ. կեփաս յուն. Պետրոս) զրաւ՝ զայն աշակերտ ընտրելու վայրկենչն¹: Նոյն ինքն յետ յարութեան երեցաւ նախ կեփայի, և ապա երկոտաս սանցի², հոդ ալ նախապատռելով զիետրուս: Եւ վերանալէն յառաջ ընդունելով անոր սիրոյն երրեակ իսսոտվանութիւնը, ինքն «Հովիւն քաջ» միշտ ի ներկայութեան բոլոր առաքելոց ըստ անոր յատկապէս ու վերջնականապէս: «Արածեա զգափին իմ, արածեա դոշիսր իմ»³: այսինքն իւր ամրող հօսը, մեծն ու փոքր անոր կը յանձնէր: Մ'եծարեց միւս աշակերտներն ալ, իւր եկեղեցւոյն ուսուցիչ ու վարդապետներ կարգելով զանոնց: «Քնացէց, ըստ, աշակերտեցէր զամենայն հեթանոս, ուսուցի նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ»⁴:

Խսկոյն յետ համբարձման Յիսուսի արդէն կը սկսի երկիլ Եկեղեցւոյ մէջ այդ փրկչական կազմակերպութիւնը Յոյժ զգաւի է Պետրոսի բացառիկ զիրքն Առաքելոց Գործոց մէջ, ուր նա նորածին Եկեղեցւոյ և աշակերտակցաց մէջ առաջին տեղը կը զբաւէ միշտ, և ինքն է զիիսուր զործիչը: Երկոտասանից անուանց յիշատակութեան մէջ իրենն ամենուն զլուսի դրուած է: Ինքն է՝ որ անոնց ժողովին մէջ կ'առաջարկէ Յուգայի յաջորդին ընտրութիւնը⁵: Հոգեգալստեան օրն ընկերացը հետ ամբոխին առջև կը զսնուին: և լոկ իւր խօսելով է որ երեք հազար հոգի ցրիսունեայ կը դառնան⁶: Յովհաննու հետ տաճարը կենէ, և ինք կը գործէ հան առաջին հրաշը՝ բժշկութեամբ կաղին, և ինք կը քարոզէ զարմացած ժողովրդեան, ու մեծ բազմութիւն մը կը շահի ի հաւատու⁷: Ինքն է՝ որ ցահանայապետաց առջև կը պաշտպանէ աւետարանն ընկերացը կողմանէ⁸: Ստացուածոց հաւասարութեան դէմ մեղանչող Անանիան ու կինը մա-

հուամբ կը պատժէ ժողովին առջև ու սարսափ կը ծգէ ամենուն վրայ⁹: Բնոլոր առաքեալը Հրաշըներ կը գործեն, յիշուած ընդհանուր կերպով: Բակ Պետրոսի համար յատկապէս կը պատմուի՛ թէ հաւատացեալը, որոց վստահութիւնն անոր վրայ շատ աւելի մեծ էր, ճանապարհին մէջ շարուած կը սպասէին՝ որ անոր անցնելու պահուն շուրջն իրենց դպչէր ու թըլըշկուին¹⁰: Նոյն ինքն իրրկ զլուսի հօտին՝ «Հըշէր առ ամեներումբը» մինչև Յոպպէ¹¹, և Հոգին զինքն ի կեսարիա կը զրկէ աւետարանելու կոռնելիոսի¹²:

Այսպէս Պետրոս է՝ որ կը կազմէ հետ զինետէ ու կը դեկավարէ անդրանիկ Եկեղեցին, իւր ստացած պաշտօնն ի գործ գնելով: Եթոյ երբ Եկեղեցին Կ'ընդարձակուի ու կը տարածուի ուրիշ աշխարհաց մէջ, միւս առաքեալը և անոնց աշակերտը կը սկսին բաժնել Պետրոսի հովուական պաշտօնը: Բայց չեն մոռնար անոր աստիճանը. Կ Պօդու իւր ցարողութեանց շրջանին Երուսաղէմ կ'երթայ «Տեատինել զՊետրոս: և եղէ, կ'ըսէ, առ նմա աւուրս հնգետասան»¹³: Ինչպէս Պետրոս ալ չի մոռնար այցելել երրեմն հեռաւոր Եկեղեցեաց: զոր օրինակ զինք կը տեսնենց Անախորից մէջ, պտուզ այլոց ցարող զութեան, ուր կը հանդիպի Պօղոսի¹⁴: Այս է ուրեմն առաջին կամ առաքելական Եկեղեցւոյ կազմն ու վարչական եղանակը, ծրագրուած Փրկչէն ու սկսած գործադրուիլ:

5. Յիսուս միանգամայն խստացաւ՝ որ իւր Եկեղեցին այդպէս կազմակերպուած, դժոխոց գոներէն անպարտելի պիտի մնար. «Դիրումք դժոխոց զնա մի յադրահարեսցին»¹⁵: Զպիտի մոլորէր կամ վըտանգուէր, որպէս զի փրկութեան սահմանուած հոգիներու համար մնար միշտ «սիին և հաստատորիսն աշմարտութեան»¹⁶: Հաս-

1. Յ. 42: — 2. Ա. Կոր. ԺԵ, 5: — 3. Յ. Կ. Ա. 15-17: — 4. Մաթ. Ի. 19: — 5. Գր. Ա. 18: — 6. Աւ. 15: — 7. Աւ. Բ. 14-41: — 8. Գ. 1-12. Դ. 14: — 9. Դ. 8. Ե. 29: — 10. Ե. 1-11.

— 11. Գր. Ե. 14, 15: — 12. Թ. 22: — 13. Ժ. 5, 19: — 14. Գաղ. Ա. 18: — 15. Աւ. Բ. 11: — 16. Մաթ. Ժ. 2, 18: — 17. Ա. Տիմ. Գ. 15:

տառեց դարձեալ՝ թէ իւր Եկեղեցին այդ ծրագրով ու յօրինուածով՝ որով հիմնեց՝ պիտի յարատեւէր մինչև աշխարհիս վերջը: «Ահաասիկ ես ընդ ձեզ եմ, ըստ աշակերտաց, զամենայն աւուրս՝ մինչեւ ի կոտարած աշխարհի»: Եւ որովհետեւ անոնց ամէն մարդոց պէս պիտի մեռնէին, կը հետեւ՝ որ Յիսուս պիտի մար անոնց հետ՝ յանձին անոնց յաջորդաց: Եւ այս պէս Պետրոս պիտի ապրէր իրրև վէմ Եկեղեցւոյ՝ իւր յաջորդաց մէջ, և միւս առաքեալը իրր վարդապետը Եկեղեցւոյ՝ իրենց յաջորդաց մէջ, որոց պիտի ընծայէր Յիսուս նոյն պաշտպանութիւնը, «ընդ ձեզ եմ», որպէս զի յարատեւէր Եկեղեցին իւր գոյութեան և անսխալ առաջնորդութեանը Փէջ:

Յ. Ակետարանին է այս Նկարագիրը. և անոնց որ կը ճանաչէին Ակետարանի աստուածային հեղինակութիւնը, տարբեր կերպով չէին կարող խորհիլ Եկեղեցւոյ մասին: Սակայն պիտի զային ժամանակներ, ուր նոյն Եկեղեցւոյ ծոցէն պիտի ելլէին անհասներ ու փոքր կամ մեծ խմբեր, և Ակետարանի վարդապետութիւնը ճիշդ հակառակ իմաստով կարդային. փոխանակ սիրոյ՝ թշնամութիւն, փոխանակ միութեան՝ պառակտութեներ, և փոխանակ մի հաւատոյ՝ ամէն զլիս նոր ձայներ «ըստ մարմաշելոյ լսելիաց իւրեանց»: ինչպէս կը բացատրէ առաքեալը, «և ի ճշմարտութիւնէ անտի դարձուցանիցն ըղլաւելիս իւրեանց»: Պիտի հաւանէր Յիսուս իւր ծրագրին այդ խանգարման: Ոչ, և ինըն իսկ կանիսնց ըստու. «Որ անարգէ զիս և ոչ ընդունի զրանո իմ, ոյս որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա յաւուրն յետնում»: Իւր սիրելի աշակերտը ճշգեց այդ զարտուղելոց զիրքն ալ. «Առ ի մէնջ ելին, ըստու, այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի լինիցին՝ եթէ ոչ էին ամեներեան նորա ի մէնջ»:

Աղոնք պիտի ենձին դուրս. սակայն Քըրիստոսի Եկեղեցին, հաստատուած իւրմէ Պետրոսի վրայ, պիտի շարունակէր մաս Համատատութիւն ճշմարտութեան»: Այս էր աւետարանական Եկեղեցին իւր համառոտ Նկարագրութեան մէջ:

Բ. — Եկեղեցւոյ առաջին գարերուն շատ փոքրաթիւ էին անորմէ անշատուածները, ինչպէս տեսանց նոյն շրջանի նուիրապետական Նկարագրին մէջ: Ճ՛շշ այդ ժամանակին, երբ Եկեղեցին դեռ միատարր էր, զարձաւ մեր ազգն ալ և զնաց խառնուեցաւ անոր հետ՝ իրրէ մասն ամբողջին:

1. Պատմութիւնը հայ քրիստոնէութեան առաջին քարոզիչ էր ցուցնէ զս. Գրիգոր, զոր Հնագոյն աւանդութիւնն ազգաւ պարթեան կը ներկայացնէ, և որոյ հակառակ փաստ չունինց տակաւին: Գելզերի զայն հայ քրմորդի համարելը. — որովհետեւ քրմերու վրայ խնամք ունեցաւ, — մըի և անընդունելի է: Հետեարար Լուսաւորչին ցեղային կապը մեր ազգին հետ և առացելութեան ծրագիրն այն էին՝ ինչ որ հրեայ Պետրոսին հառվմայեցւոց և կամ Մարկոսին՝ աղեցանդրացւոց հետ: Այսպէս տոհմավ օտար, զաստիարակութեամբ ու լեզուով յոյն, իւր հովուապետական իշշիանութիւնը ստացած կեսարիայէն ու զըրած անոր գերիշխանութեան ներքե, պարզապէս աւետարանիշ մ'եղաւ նա Հայոց՝ կաթողիկէ Եկեղեցւոյ կողմանէ, և ոչ բնաւ հիմնագիր ասանձին եկեղեցւոյ մը: Որով Ղազար ըսել կու տայ ս. Մահակայ՝ առ Հայս. «Զվարդապահուորիւն առոր ասաքերոյն Պատոսի, զոր աւանդեալ ուսոյց ձեզ հոգեոր հայրը մեր և քահանայապետն սուրբն Գրիգոր»: ու Պօղոս զատ եկեղեցիներ չէր ճանաչեր: Աւելի նշանաւորը, Ազաթանգեղոս Լուսաւորչի շրթանց վրայ կը զնէ տիեզերական Եկեղեցւոյ միութեան այս չընազ սահմանը, թէ Քրիստոս իւր բոլոր հաւատացեալներն ի մի զօղեց՝ «միանական միարանութեամբն իրրե զմի տուն

1. Մար. ի՛լ, 20. — 2. Բ Տեր. գ, 8-4. — 3. Բէ. ԺԲ, 48. — 4. Ա Յէ Բ, 19. — 5. Բարկ. 1926,

105. — 6. Տեր Միհամ. 45. — 7. Փարզ. 57.

կրնեցուցեալ, միախոհ միահաւատ ձշմարտորենամբն, միաբարող յօդապատ տեղամօքն, միատաճար լիստուածութեանն»։ և այս ծրագրին համեմատ ալ, կ'ըսէ, համար պիտի պահանջէ հակառակողներէն։ Շորով և զամենայն տիեզերոց քննեցէ վասն իւրոյ գալստեանն հաւատոյ՝։ Այս շըշանի կրօնական միութեան աւելի կենդանի նկարագիր չի կրնար մինել։

Որով հակառակ այս ծրի վճոփն՝ թէ «երեք Հայոց եկեղեցին Յոյներէն ճիւղաւորմամբ չունեցաւ իւր ծազումը, այլ առաքելական քարոզութեամբ և անկախորէն լուսաւորութեամբ և ինքնուրոյն կազմակերպութեամբ ստացաւ իւր սկզբնաւորութիւնը», ի հետուկո այս գեղեցիկ երազին, կ'ըսեմ, իւր առաջին առաքեալն եղաւ հելլենավարժ պարթե մը, անդամ յոյն եկեղեցւոյ, և նորադարձ Հայերը կապեց անոր հետ, անոր լեզուով և իմաստներով ազօթել ստուա անոնց, սնոյց անոր սկզբնանքութիւնը, ու ենթարկեց անոր գերազանցութեան, զոր անխալստ պահեցին իւր զաւակներն ու թուներն ալ, որոնք նոյնպէս յունական կրթութիւն առած էին Յունաց քով, և հետաեցան իրենց հօր ծրագրին։ Այս ամէնը տեսանց փաստերով։ Սյոյն պատճակնեան ճշմարտութիւնը քաջ կը ճանաչէին նաև մեր հետազայ ողջամիս Հայր, որոց մին՝ 1179ին եպիսկոպոսաց պատկառելի ժողովի մ'առաջն ի ճայն բարձր կը յայստարարէք, խօսելով իւր ազգին։ «Գու ձիթենի վայրենի՝ պատուաստեցար յանբուն քո ի բարի ձիթենուղն, զի զՊաւուսին յիշատակեցից»։ այսինքն հեթանոսութենէդ յոյն եկեղեցւոյ վրայ հաստատուեցար. և «ոչ թէ զու զնա, այլ նա արմատ գոլով երբեմն՝ զեկզ կրէք ի վեր ունելով»։ ու խօսելով եկեղեցական բաժանման մասին, կ'ըսէ՝ թէ «զու ի նմանէ, և ոչ թէ նա ի ցէն հատաւ»։ Այս է իրողութիւնը, որ անշուշտ

մեր արդի զրիչներու յօժարութեան համեմատ չի կրնար այլափոխութիւն։

2. Բնական է ուրեմն՝ որ ՚ի-՚ի դարերուն Հայաստաննայց եկեղեցի բացատրութիւնը գոյութիւն չունենար տակալին։ Ո. Գրիգոր, կը զրէ Ագաթանզեղոս, «զիր վիճակն՝ զնայաստան երկիրն» կը պայծառացնէ նեկամակն և իւր զրած կանոններով։ «Հայաստան երկիր» կ'ըսէ, ոչ եկեղեցի։ Եւ Ղազար՝ «յամենայն եկեղեցին Հայոց» կամ «յեկեղեցին հայաստան ժողովրդոց» բառերով՝ թեմերն ու աղօթատները կ'իմանար. Շատ ուշ՝ Խորենացւոյն քով առաջին անգամ կը հանդիպինք՝ «Ծղորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանիաց» խօսքին։ Թէպէտ և անտեղի ալ չը այդ, և կը նմանէր՝ «եկեղեցւոյն իենքրացւոց» կամ «եկեղեցւոյդ թեսազննիկեցւոց» բացատրութեանց, իմացուելով տեղույն հաստացելոց ժողովը, և ոչ ուրոյն եկեղեցիներ։

Իսկ շատ անհեթեթ պիտի լինէր հոդ Գրիգորեան կամ Լուսատրյական եկեղեցի ասհմանը, որոց նմանները՝ Պատրիսիան, Աղոթուան կամ կեփայեան, հնարուած կորնթացւոց կողմանէ՝ յանուն իրենց քարոզաց, վաղուց գատապարտեր ու Ծնիքը էր հեթանոսաց մեծ առաքեալը։ «Իսկ արդ, կը զրէ անոնց, բաժանեալ ինչ իցէ Քրիստոս. մի թէ Պաւուս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պաւուսի մկրտեցարուց», իւր անուամբ զատապարտելով միւսերն ալ, Այսպիսի բաժանական կոչումներ՝ Եկեղեցին նախկին դարերուն կու տար իւրմէ անջատուած և աղանդապետաց հետևող խմբերու, արիանոսք⁹, մարիփոնք¹⁰, մանիկեցիք¹¹, ենատորականք¹², բայց ոչ երբեք ուղղափառաց. և Հայոց առաքելոյն անունն իւր հօտին վրայ՝ աղոնց պիտի հաւասարեցնէր և անարգէր հովին ու հօտ միանգամայն։ Այս տեսակիտով անտեղի է միշտ Լուսատրյական

1. Աղաթ. 456. — 2. Աղաթ. 691. — 3. Լամբ. Ասեմ. 161. — 4. Աղաթ. 657. — 5. Փարպ. 72, 86 և. — 6. Խորեն. Գ. 42. — 7. Հոռով. Զ. 1. Ա.

թես. Ա. 1 և. — 8. Ա. Կոր. Ա. 12-15. — 9. Փաւս. 94, 98. Խորեն. Բ. գ. Գր. բրոց, 8. — 10. Եղիկէ, 288. — 11. Փարպ. 584. — 12. Գր. բրոց. 70.

կոչումը, և ոչ թէ որովհետեւ մեր եկեղեցին առաքեալներէն սկսած է, ինչ որ հերեցինք:

Նմանապէս եկեղեցական ինքնուրոյշնուրին, անկախուրին, ազգային ժողովրդական եկեղեցի և այլն, որոնց պիտի հնարուէին ու քաղցրահնչիւն բառեր դառնային օր մը, չկասին այլ շրջանին, և անոր հետ խոտոր կը համեմատին: Այլ կար միայն իրենց հոմանիշը, հերթուած, ուսկից կը սոսկար ըրիտունեայ Հայատանը. և կը պայքարէ՛՝ աշխարհի զայն պահանջող ներին կամ արտաքին իշխանաց դէմ, այն աշխարհի՝ զոր Յիսուս իրեն և իւրայնոց թշնամի յայտարարեց՝ Երր անոցմէ երկուքն (Ալշակ ու Պատ) ուզեցին անջատել Հայոց հայրապետութիւնը Ցոյներէն, որ իւր հետ պիտի բերէր ազգին կրօնական բաժանումն ալ, իրենց դէմ ճակատած գոտան ամրող հայ եպիսկոպոսութիւնը¹: Եւ երր երրորդ մը (Յազկերտ) փորձեց յառաջ բերել աւելի խոր բաժանում մը, իւր դէմ կանգնեցաւ հոյ ազգը, աղաղակելով. «Հայը մեր՝ զուրբը Աւատարանն զիտեմը, և մայր՝ զատքելուհան Եկեղեցի կարողիկէ»: Կարողիկ՝ յունարէն է, առօլուշ, և կը նշանակէ ընդհանրական, ժամանակի հանգանակին մէջ արուած տիեզերական Եկեղեցւոյ². և զոր Հայը նոյն աղրիւրէն և նոյն նուիրական իմաստով ալ փոխ առին ու զործածեցին, պնդելով՝ թէ «մի որ չար անջրպետ ի մէջ անկեալ՝ զմեզ բակեսէ ի ուստե՛»: Այս միութիւնը պահելու համար՝ հայ կանայց անգամ զրահ հազան, և հազարաւոր նահատակաց մարմիններ ծածկեցին Աւարայրի զաշուը: Այս էր անոնց ճանչցած ու խոստվանած միակ եկեղեցին, կարողիկ Եկեղեցին՝ որուն կը պատկանէին, և որոյ նշանակութիւնը շատ հեռի էր իրենց մըտաց մէջ՝ «Հայ եկեղեցւոյ» արդի փոքրիկ իմաստէն:

3. Բազմազիմի էին Հայոց կապերն ընդհանրական Եկեղեցւոյ հետ Վասիլին՝ նուիրապետական միութիւնը, որով Հայատանայց աթոռը՝ Լուսաւորչէն սկըսակալ՝ կախուած էր կեսարիայէն, անտի ընդունելով նախ իւր հայրապետութիւնը, և յետոյ կաթողիկոսաց ու ժամանակի մը նաև եսիմկողովոց ձենադրութիւնը՝ Երկրորդ գարզապետական ու բարեկարգական միութիւնը, զոր հաստատուն պահելու համար՝ մեր հայրապետները կ'երթային մասնակցելու կապադովիլոյ նահանգային ժողովոց³: Մերթ ուղղակի կարգապետութիւններ՝ և հրաշանգները և վարզապետական թղթեր ևս կ'ընդունէին երթագոյն աթոռներէ⁴, և թղթեր նաև հաւասարներէ⁵, որոց և կը պատասխանէին մեծարանօց⁶: Եւ հուսկ՝ անձամբ, նուիրակով կամ համանութեամբ կը մասնակցէին տիեզերական ժողովոց՝ ի հերցումն մոլորութեանց⁷: Եւ այս բոլորը դարձեալ կը ժխտեն ազգայնական կամ անջատ եկեղեցւոյ վիճակին գոյութիւնը մեր մէջ այլ շրջանին:

4. Նախ կեսարիոյ և ապա կոստանդնուպոլսի հայրապետաց զերիշխանութեան հետ, որուն անընդմիջարար ենթարկուած էին Հայը, միւս ցրիստոնէից հետ⁸ կը ճանաչէին նաև Պետրոսի աթոռնին նախագահութիւնը տիեզերական Եկեղեցւոյ մէջ: Այս համոզումը կը բղիւէր մեր հարց մըտքին մէջ ևս՝ փրկչական սահմանադրութիւնն Ազաթանգեղոս ըսել կու տայ Լուսաւորչին՝ թէ Քրիստոս Պետրոսի հայրաշունչ դաւանութեան վրայ «արար զնավկէ հաստատարեան ամենայն եկեղեցեաց⁹», ուր կը շեշտովի անոր իշխանութեան ընդհանրականութիւնը: Եզնիկ խօսելով Պօղոսի անձառելի տեսլեան մասին, անոր բերանը կը զնէ՝ թէ չէ կարելի պատմել զայն, ոչ միայն իրեն՝ «որ տրուպս եմ առաքելոց, այլ թէ և Պետրոս որ զույխն է

1. Յ. Ժ. ԺԳ-ԺԸ. — 2. Բար. 1926 181, 193 և. — 3. Հանդ. հաւ. 90. — 4. Եղեւէ՛ 51. — 5. Բար. 106, 181 և. — 6. Ալդ. 184. — 7. Ալդ. 181. — 8. Ալդ. 188, 165. — 9. Գր. բարոց, 14, 19. — 10.

10. Բար. 166-6. — 11. Ալդ. 656. Կոբէն. 21. Խորէ. Բ. գ. Գ. 17. — 12. Բար. 106. — 13. Ալդ. 844.

առաքելոց՝ ատեսանիցէ, չկարէ ճառել¹։ ուր յայտնի է թէ Պետրոսի աստիճանին հետ անոր ճայնին ալ առաւելութիւն մը կ'ընծայէ՛ Եւ ս. Սահակայ անունը կրող կանոնաց մէջ, սրոնց յամենայն դէպս զոնէ Ե դարու վերջերէն են, կը կարգանք. «Որդ զի՞նչ իմանայցինց զասելն ցՊետրոս վեմ մի՛ թէ որպէս վլմբ որ ի քարանցց բաւ լիցի. այլ մարդ բանաւոր, զոտի ա- սաքերական դասւեն, Եւ զի անդրդուելի հաւատովք իստուվանեաց զՔիրստոս որ- դի Աստուծոյ, երանութիւն ընկալաւ. և վէմ անուանեցաւ: Ապա ուրիշն և շինեալին ի վերայ եռու չեն քարինց անշունչց, այլ մարդիկ նորին հաւատութեաց հագորդակիցը²»։

Ուեկի ցայտուն է Եղիշէի այս վկայութիւնը. «Որդ ցանզի մի է հօս և մի է հովիր. (Պետրոս), և մի արօսց են և մի մակաղատեղ հանգստեան ամենեցուն, անդ են գտինց և ոչխարց և ամենայն բազ- մութիւնն, զոր իաշինս ասաց (Յիսուս). մանաւանդ նորին իսկ ասացեալցն, զորս յանձն արար Պետրոսի, և որց գործակից եղն նորին ցարողութեանն, ամենեցն սոցա զափինը սուրբ են և աստուծածա- յինք. և թէ «խաչինց ամենայն ազգ հե- թանոսաց» են³: Որով ասացեալներէն սկը- սեալ՝ բոլոր ցըրտունութիւնը Պետրոսի իշխանութեան ենթարկուած կը գաւանի: — Զըսենց հոս, թէ ո՛րքան տղայական ևն արդի ոմանց ջանեցրը՝ կամակորելու Պետրոսի այս պատահական նկարագիրը՝ թէ՝ Ուետարանին և թէ նախկին Եկեղե- ցւոց ըմբռնողութեան մէջ: Տղայական՝ ը- սի, որպէսեան պատմութիւնը չի բռնա- բարուիր, և ինչ որ գորուած է անջնջելի կը մայ՝ խեղաթիւման տգեղութեան ցով։

Ուարելապետին իշխանութեան շարու- նակութիւնն ալ կը տեսնէին Հայք անոր յաջորդաց մէջ, տիեզերական Եկեղեցւոց հետ: Եզնիկ ս. Եպիփանի հետեղութեամբ կը պատմէ՝ թէ Մարկիոն կուսապղծու-

թեան համար իւր եպիսկոպոս հօր ձեռքով կը մերժուի եկեղեցիէն. « և երեւալ ի Հովմբ՝ խեղրէլ ապայիսարուրին յայնմ ժամանակի, և չհասեալ այնմ, զրգեցաւ ընդէմ հաւատոյ՝ Պարսկաստանէն մին- չև Պետրոսի աթոռը կ'երթայ ապագայ աղանդաւոր, համոզուած՝ թէ հոն միայն կրնար զտնել ներող գերազոյն իշխանու- թիւնը, զոր Յիսուս բոլոր առաքելոց մի- անգամայն տուածէն զատ՝ յատկապէս շնորհնեց Պետրոսի, ըսելով. « Ճաց քեզ ըՊ- ֆականս արքայութեան յերկրի՝ եղիցի կա- պեալ յերկինս, և զոր արձակեսցն յեր- կրի՝ եղիցի արձակեալ յերկինս »: Եւ այդ փականաց մէջ առանձին իրաւունց մը կը նկատէր հին Եկեղեցին, ինչպէս տեսանց նաև Եփեսոսի ժողովին բացա- տրութեան մէջ⁴:

Հանրածանօթ է Ցրդատայ ու Գրիգորի այցելութիւնն ի Հռոմ՝ առ Կոստանդիա- նու և առ «հայրապետն մեծ՝ արքեպիս- կոպուն աշխարհամուտ զրանն, որում ա- նուն կոչէր Սեղեստրոս», ըստ Ազաթան- գեղոսի⁵, և որուն հարազատ է տեղեկու- թիւնս՝ որ կայ յոյն Բարգմանութեան մէջ ևս: Կրնայ Հռոմայ հայրապետին անունն ըստ յունաբնին ու հայ զրչագրաց ոմանց գորուիլ նաև Եսաւիոս, և իմացուիլ Սեղ- բեստրոսի նախորդը, և կամ Նիկոմիդիոյ համանուն եպիսկոպոսը: Կրնան բանա- սէրը փոխանակ հին Հռոմայ նորին (կ. պոլսի) մէջ կամ այլուր որոնել այցին վայըը, կամ բոլորովին կասկածիլ մերոց երթին վրայ՝ Սակայն ոչ մի զրչագիր կարող է փոխել, և ոչ մի բանասէր հեր- եբ՝ թէ Հայոց պատմչին դիմաւորութիւնն եր՝ այդ այցելութիւնը դնել « յաշխարհն իտալիացւոց և յերկիրն Դադմատացւոց՝ ի թագաւորական քաղաքն Հովմայի ց- տոց¹⁰ ». և թէ նա ուզեց մեր առաջին ըլիստոնեայ թագաւորն ու Լուսաւորիչը

1. Եփես. 268. — 2. Սոփեր, թ. 101. — 3. Եղիշէ՝ 852, 853. — 4. Եփես, 296. — 5. Մաթ. Ժ. թ. 18. 84. ի. 28. — 6. Մաթ. Ժ. թ. 19. — 7. Բարկ. 1926, 106.

— 8. Ապաթ. 651. — 9. Հման. Ցեղ. պատ. թ. 479. Գել. Փ. թ. 152, 157. Հ. թ. Աւազ. Բազմ. 1914, 280-84. և. — 10. Ապաթ. 651.

տանիլ յուս կայսեր և Պետրոսի յաջորդին, և աղով պատուել մեր պետերը:

Երնայ նաև խորհութ, - ես ինց կը թելադրեմ զայս, - որ այդ առթիւ մերոց կողմանէ զլիսաւոր մեծարելի անձը պիտի լինէր կայսը, և հայրապետին մասնակցութիւնը նշանակուած է պատշաճութեան համար, և զուրկ կրօնական նշանակութեանէ, Ասոր դէմ կը կանգնին երկու փաստեր: Նախ՝ Ազաթանգեղոսի մեծամեծար բացատրութիւնը նոյն հայրապետի մասին: Եւ երկրորդ՝ կարեւոր յիշատակարան մը, Յովսէփ Կաթողիկոսի, եպիսկոպոսաց և աւագանույն թուղթն առ Թէոդոս կայսր՝ 450ին¹ յորում հաւանորչն հաստատուած ազաթանգեղեան տեղեկութեան մը վրայ, Կ'ըսէին՝ թէ Տրդատ «զհաւատան» որ ի Գրիստոս ընկալելի ի սուրբ եպիսկոպոսապետին Հոռվմայ, լուսաւորեաց զիւաւարային կողման հիւսիսոյց: Երնայ այս նամակս ալ պատմշէն կերտուած համարութիւն: Համարինք. հասմարելին ինչ կայ դիւրին: Դժուարինն առացուցանելն է: Համարինք: Բայց վերջապէս Եւ զարու Հայութեան զզացումներն ու գրիչն են՝ որ կը խօսին հոդ. և որ քաղաքավարական այցելութենէն աւելի բան մը տեսնել և ցուցնել Կ'ուզն Հայոց պետերուն երթին մէջ: Ե'ուզնն՝ որ Տըրդատ, յետ աշակերտելու Լուսաւորչին, իւր բերանը բացած լինի վարդապետական աւելի հեղինակաւոր և աշխարհամեծար աղրիւրի մ'առջև, Պետրոսի յաջորդին, որոյ նուրիսապետական վերագոյն զիրքն իրենց ալ ծանօթ էր. և նամակազիրը (կամ պատմիշը) կը բազման պարծիլ բիւզանդական արքունեաց առջև՝ կարծեցեալ յամուկ կապով մը նոյն աթոսին հետ Հոս իշխողն ու կարեւորը դադափարն է, որ սեպհական է ազգին, և ծնունդ կուտայ Տըրդատայ ու Լուսաւորչի երթին ի Հոսու, կամ Եղիշէի կոչած թղթին. և որ զԽորենացին ես, յԵլլակա երթալու ժա-

մանակ՝ հողմոց բռնութենէն իտալական ափանց վրայ ընկած, յառաջ կը տանի մինչև ի Հռոմ՝ «ողջունել ի հանգիստ սրբոյն Պետրոսի և Պաւլոսի²», զոր իրեն հետ կը մեծարէր իւր հայրենիքն ալ:

Այդ բոլոր վկայութիւնները բոչեցի ուղղակի մեր հարց բերանէն, որպէս զի չնարկադրինց արդի ինքնակոչ և աղիկամի մեկնիշներէ ուսանիլ մեր. այդ շըրջանի կրծնական համոզութերը, Միանգամայն կը զիսեմ՝ որ Ազաթանգեղոսս, Եղնիկ, Եղիշէ, սահական կանոնաց հեղինակը կամ Խորենացին՝ Հոռվմայ աթուոյն պատուիրակներ չէին, անոր զերագանութիւնը քարոզելու դրկուած: ոչ ալ ո՛ր և է անմիջական կապ ունեցած են անոր հետ. այլ մեր հողին վրայ ծնած ու մնած մարդիկ, որ կը խօսէին իրը հայ և Հայոց: Հետևաբար իրենց տեսութիւնն Եկեղեցւոյ նուրիսապետութեան մասին՝ կաթողիկէ Հայաստանի համոզումն իսկ էր: ընդունած ըրիստոնէութենէ ու ըրիստոնէութեան հետ, զոր իրենց յօժարամիւ կը կրկնէին:

5. Ակնարկեցի վերև անոնց զաւանական միութեան ևս տիեզ. Եկեղեցւոյ հետ միութիւն մը՝ որ կը տարածուէր բոլոր վարդապետական մասանց և ո. խորհրդոց վրայ, Այդ կէտերէն մատնացոյց պիտի ընկեր հոս զանոնց միայն՝ որոց մէջ Հայոց մեծամանութիւնը կը հեռանայ այսօր հին զաւանութենէն: Այսպէս՝ եթէ պէտք է հաւատալ Օրմանեանի, «Հայոց (արդի) Եկեղեցին խզամիտ ճշգութեամբ անփոփոխ կը պահէ հախիկի և ատաղական ձեմբրը: Այդ պատճառով նա շընդունիր և յիլրդոյ յաւելուածը, տոանձնական զաւաստանը, մաքրարանի պատիժները, մահուանէ ետքը անմիջապէս երանաւէտ տեսութիւնը, զոյացափոխութեան զրաւթիւնը» և այլն³: Եթէ այս համոզումները եախիկին կամ սկզբնական համարողն անփառութիւնը չէ, ապա կելզիքին է, զոր ուժգնակի կը հերքէ կրծնապատմութիւնը, ցուցնելով՝

1. Եղիշէ 55. — 2. Խորեն. Գ. կը. — 3. Հայոց

Կիե. 187.

թէ մեր հին Հարք աղոնց ճիշդ հակառակը կը խորհին: Այսպէս՝

ա. Յունաց մեծ վարդապետաց հետ՝ կը բոստավանէին անոնց ու, Հոգևոյն բղուումն ի Հօրէ և յՈրդոյ միանգամայն. «Հայր և Որդի, և սորր Հոգին ի հոգուց ի հոսկին», կ'ըսէ լուսաւորիչն Ազաթանգեղոսի քով¹. ուրեմն երկուցէն ալ ելած և երկուցին մէջ բնակող անքամանարար: Եղիշէն Արարաց մեկնորեան մէջ, որ կորսուած է և ուսկից քաղուածներ ունի վարդան իր համառուն գործին մէջ նոյնը կը հաստատէ, բախով՝ «Առաջին ոչ է ծնեալ յումերէն. երկրորդն ծնունդ է առաջնոյն. երրորդն՝ առաջնոյն և երկրորդին երամամնն, իրրե արմատ և ծառ և պտուզ». ուր ինչպէս պտուզը յառաջ կու զայ արմատէն ու ծառէն միանգամայն, նոյնպէս և Հոգին ի Հօրէ և յՈրդուու: (Օթինակիր հետ ներդաշնակ է վարդապետութիւնը, զոր 1410ին նոյնպէս կը կարդար Մի. Ազաթանիցին ևս՝, — ուսկից և ևս կ'առոնւմ, — և զոր յետին հակառակորդ մը կ'աղաւաղէ այսպէս. «Երրորդն՝ ոչ երկրորդին, այլ առաջնոյն է ելութ և բղիուումն», միարեց զնելով՝ թէ այսպէս Եղիշէն իրեն նման նորհած կը միմէ):

բ. Կ'ընդունէին Հայր մարգարին հոգոց վիճակին սահմանումն իսկոյն յետ մահուան, առանց կայանական յուսահատ սպասման մինչև ցյարութիւն: «Հոգին որ եւանեն ի մարմաւ աստի, կ'ըսէ Յանձնախապետմը, երաք ի կեանեն ըստ խրաբանիր արմանաւորութեան»: Եւ երեք էին այդ վիճակները: — «Սուրբ և արդար հոգեացն, կը յարէ նոյն մատեանը, ընդ առաջ զան հրեշտակը և սրբոցն հոգիքն, և տանին առաջի Աստուծոյ՝ սաղմուիւց և օրհնութեամբ և երգօց հոգեութօք, ուր անոնք «ամենայն երանութեամբ գուարեն կը յայտնական ի հանգրաւեանն ի մշտակաց մինչև ի հասարակաց աշխարհն... յանուշակն ի մշտնջնաւոր ուրախութիւնն... լուցանին որպէս զարեգակուն յանմաւոյց լուսոյն... և վայելեն յանսպառ և յանպատում բարութիւնն»: Եղին հաւատացը կը յայտնէ և Յէ. Մանդակունին, զբելով այսպէս. բարի «վախճանեալն յերկինս կոչեցաւ, ուր են ամենայն ժողովը միեկերաց, բանակը արդարոց և գունդը սրբոցն... խորանը պայծառապարզը, բնակութիւնը լուսեղինը, և մշտնջնաւոր վայելչութիւնը և փափաքելի դրախտն»:

գ. Խակ անզեղջ մեղաւորց՝ ըստ Յանձնախապատում զրոց «բազում ողրոց և արտասուաց արժանի են, և ծանր վիշտունին ի վրիտոսուէ²: — թէպէտ այլուր, հարազատ կամ եկամուտ, ասոնց հատուցումը կը յետաձգէ³: — Եղնիկ պատաւախանելով Մարկոնի, որ կ'ուսուցանէր՝ թէ վրիտոս յետ մահուան գոնիք իջաւ, և զթալով փրկօց ասին «տանջանաւոր» հոգիները, կը հարցնէ հայ վարդապետը՝ թէ ինչո՞ւ ուրեմն Աստուծուած իւր որդույն առագումը չուշացուց մինչև աշխարհիս վերջը որպէս զի ամենուն ողորմէր, վասն զի, կ'ըսէ, այլ ևս «չիր հնար վերջնոցն՝ որ անդր անկան (ոչ թէ պիտի ընկնին) թէ եւանիցեն, բանզի այնուհետեւ զգուշացաւ նոցա (ներսը պահեց) տանջիչն»: Մանձակունին կը ձայնակցի ասոր, բսելով. «Ոչ յիշեմք իսկ ամենէին՝ եթէ զինչ ունիմք կրել յետ մահու», ոչ թէ յետ յարութեան. և թէ «անդր երթեալ ով կարասէ պատմել զմշտնջնաւոր աններելի աղէտիցն նեղութիւնս, ուր այրինն և մաշին (հիմայ իսկ) ամօթով և նախատանօց⁴: Այսպէս արբայութեան նման՝ զժոխիցն ալ կը սկսէր յետ մահուան:

1. Հման. Vacant, V, 774-93 և. — 2. Արտ. 271. — 3. Գր. թ. 1663 և. Ար. էլ 258թ. — 4. Գր. թ. 999, բուրգեր, էլ 106. թ. 508 նոր, գաղափարուած նախորդէն. թ. 552 նոր. — 5. Յանձն.

151. — 6. Ար. 128, 152. — 7. Ար. 248-49. — 8. Մանդ. 179. — 9. Յանձն. 142. — 10. Ար. 158. — 11. Եղնիկ, 274. — 12. Մանդ. 25, 28.

Դ. Կաթողիկեայ Հայաստանը կը հաւատար նաև անդրշիրմեան երրորդ վիճակի մը, յորում նպաստ կ'ընծայէք նոգիներու դասակարգի մը, «մեղոցելոց և խոստվանողաց և ապաշխարողաց», «որոնք զղացած՝ բայց մեղաց հաստումը դեռ չէին ըրած, իւ որոց «կատարեացին, կ'ըսէ Յաճախապատումը, յշատակը» ֆըրիստոսի պատարագաւն և աղօթիւր և զթով տնանկաց և այլ բարի գործովք, զի վերջնովքս բարեկործութեամբը հանգուցնաքը նորոգեսին նորոգորեամբ կենաց անվախանից»։ Եւ Մանդակունին կը հաստատէ՝ թէ այս յիշատակն «է կաշառ բարեարին Աստուծոյ, որ ասեն բարեարորին ի վերայ վախանեարյն որպէս ինըն զիտէ»։ Դատարկ բան է քատարան անուան խնդիր ընել. կարեորը վիճակն է՝ որ ընդունելի էր մեր Հարց։

Ե. Սոյն շրջանի հայ եկեղեցին զիտէր նաև յարզը եօթն սրբարար խորհրդոց, որպէս աղբերաց աստուածային շնորհաց, և ամրոջ ու անազարտ պահած էր զանոնց սիեզ. Եկեղեցւոյ հետ, համոզուած՝ թէ Քրիստոս ոչ մէկուն իշխանութիւն չէր տուած յապաւելու զանոնց կամ այլայիւլու անոնց ձեզ կամ իմաստը, որոյ մէջ պիտի մտնէր արհամարհութիւն հաստատողին զէմ և վաս հոգւց։

Այսպէս մեր նախնիք ունէին ու կը գործադրէին հիւանդաց օծութիւնը, առաջելոց օրինակին ու հրամանին համեմատ՝, և որոյ սահպողականութիւնը կը շեշտէր Մանդակունին՝ ըսելով. «Հրամային մեզ պատուիրանց Աստուծոյ... հիւանդաց աղօթըս և օժումն իդոյ»։ Եւ անոր գործադրութիւնն ալ կը տեսնենց մեծ հայրապետի մը վրայ, ս. Մահակայ, որոյ մասին ականատես վկայն կը պատմէ՝ «ի պաշտաման անոշահու իդոյին հանդերձ աստաւածահանոյ աղօթիւր՝ ծերունոյն ի Քրիստոս աւանդեալ»։ Իսկ մեր արդի զիւնականները չտեսնելով այս փաստերը, իրենցմէ

մին «ապացոյց» պահանջեց ստարէ մը, վերերէ, ի նպաստ օծման գոյութեան ի Հայոյ զոր կ'ենթադրէր նա։ ուրիշ մը համարեցաւ՝ թէ «Հայոց մէջ գործածական չէ եղած» այն։ և երրորդ մը՝ թէ Հայը «շատ վաղուց՝ նոյն իսկ առաքեալներից յիտոյ մերժեր են իւզի գործածութիւնը», այսպէս իր ակնարկը հասցնելով մինչև առաքեական դարը, և միւս զիւնոց պէս չնշարելով աւելի մերժաւորը, մեր Եղարու մատենազութիւնը։

Գ. «Գոյացափոխութեան դրութիւնը» շենք ընդունիր, ըսաւ Օրմանեան Ռւրիմի ստիպուած էր ընդունելու և կ'ընդունէր բողոքական դրութիւններէս մին։ կամ հացն ու զինին օրինակ միայն են մարմանը և արեան Փրկչին՝ առանց որ և է փոփոխութեան, և կամ նոյնայս անփոփոխ պահելով իրենց գոյացութիւնը, իրենց ներքեած էր ծածկեն փրկչական մարմինն ու արինը, իրեւ անոնց պատեանը։ Ասոցմէ զատ ամէն բացատրութիւն դատարկ խօսքեր են։ Սակայն հին հայ եկեղեցին հոս ալ ձայնակից էր Աւետարանին ու կաթողիկէ Եկեղեցւոյ, որ խօսեցաւ Ասկէրեաններու և Նազիանզացիններու բերանով, Արքաթանգեղոս ըսել կու տայ Լուսաւորչին՝ թէ Յիսուս չարչարուելէ յառաջ պարգեւեց «զինդանաբարար մարմինն իր և զարինն աշակերտացն», ոչ թէ անոնց օրինակները Եւ պատմիչը կ'ըսէ՝ թէ ս. Գրիգոր յիտ մկրտելու զՀայոյ, ամենուն բաշխնեց «զսուրբ մարմինն և զպատուական արինն ամենա-փրկչին Քրիստոսի, զինդանաբարէ և զինցոցի ամենայն մարդկան, և զարարին և զաշխարհագործն ամենայն աշխարհին»։ Եթէ հազորզութիւնը նոյն ինցն աշխարհի արարիչը, կենարարն ու փրկչին է ուրիմի հացն ու զինին այլ ևս գործ չունին անոր մէջ որ և է չափով ու ձևով, բաց արտացին երկոյթներէն. և գոյացափոխութիւնը կատարեալ է հոդ։

«Մեր, կ'ըսէ Մանդակունոյն հզօր

1. Յաճախ. 141. — 2. Մանդ. 178. — 3. Մարկ. 9. 18. Յակ. Ե. 14. — 4. Մանդ. 195. — 5. Կորին. 26.

6. Տեր Միհամ. Ալրու. 1908, 541. — 7. Հայոց եկեղ. 148. — 8. Մւէլը. Ա. 413. — 9. Աշաք. 362, 622.

ձայնը, ճշմարիտ հաւատով զիրիստոս իմանամբ ի վերայ սեղանոյն, ի նա մերծենամբ, զնա տեսանեմբ, զնա շօշափեմբ, զնա համբորդեմբ, զնա առնումց ի ներքս և ընդունիմբ¹: Ուրեմն մեր զգայարանաց ենթարկուածն խոկ է Քրիստոս, և ոչ ուրիշ մը՝ ծածկուած անոր ներքեւ, զոր ոչ կրնանց տեսնել, ոչ շօշափել, ոչ համրուրել: Եւ եթէ մեր տեսամբ Քրիստոս է, սա չի կրնար իրեակայութէ քրայ եթէ իր իսկութեան և ամրողջութեան մէջ, հոգում՝ մարմնով աստուածութեամբ, ինչպէս էր երկրու վրայ և է երկինքը: Այս խոկ է զոյացափոխութեան ուղարկան վարդապետութիւնը, որ կաթողիկէ Հայաստանին ալ էր, և որով իզդշէն ևս կրնար ըսել՝ թէ Ծիսուս վերնատան մէջ «ինքն յիերեն ձաշակեաց», ա. հացը նոյնացնելով անոր հետ: և մեր ալ, կը յարէ, «պատմելով զմանն Քրիստոսի ի վերին տէրունական սեղանոյն, հաց և զիերեն ոչ որպէս երե յասաշ՝ նոյնիկո յիերի, այդ մարմին և արին աշմարիտ Քրիստոսի²: Հացին ու զինույն այս արմատական փոփոխութեան կը հաւատային նաև մեր հետագայ բուռու վարզապետը, որոցմէ Խոսրով կ'ըսէ՝ թէ Փրկիչն «քհացն առնով՝ մարմին աստուածիյի փոխարկեաց»: և Լամբրոնացին՝ թէ սրբազրեալ հացն «համարենարին և Աստուած, և ոչ օրինակ»: և թէ «Աստուած և հաց»՝ և այլն, իւս այս ամէնը հիմնաւուած էր Ծիսուսի վարդապետութեան վրայ՝ թէ «հացն զոր ևս տաց՝ մարմին իմ եւ»: և թէ «այս և մարմին իմ, այս և արին իմ»: ինցն խոկ է, և ոչ թէ օրինակ մարմոյն, և կամ մարմինը հացին և արինը զինույն ներքեւ: Ահաւասիկ Քրիստոսի, կաթող. իզեկեցւոյ և մեր Հարց զաւանած «զոյացափոխութեան զրութիւնը», զոր Օրմանեան, Ահաւակ քահ: Ցարք Սարգսեան կամ ուրիշներ կրնային չընդունիլ, և աստուածապարզեւ

խորդղոց գերագունին և ահաւորագունի մասին իրենց տածած թերահաւատութիւնը Հայութեան զգէն ալ կախիլ, և սա ընդունիլ այդ նախատինը անորոտունջ: Բայց աղով զոյացափոխութիւնը մեր նախնեաց զաւանութիւնը լինելէ չի դադրիր: և ինչ որ անոնց թողուցին զրով, զրչի կամակոր հարուածով մը չի կրնար յեղաշըջուիլ:

Եւ Ծիսուս սահմանեց նաև խոստվանութեան խորհուրդն ի ցաւութիւն մեղաց, անոր հետ կապելով՝ իրը անհամեկտ պայմանի՝ աստուածային թողութիւնն ալ՝ խոստվանութիւնը կը կատարուէր յայտնութեամբ խոզի՝ Աստուածոյ պաշտօնէին առջն: Խոստվանութիւն բառն ինցին կը նշանակէ՝ ըրած զործերը կամ սրտին խորհուրդները պատմել: և այսպէս կը կոչուէր սկիզբն խորհրդական խոստվանութիւնը ալ: «Խոստվան եկիրուց միմանց զմեզու»³: Ու կաթողիկէ Հայաստանը հաստարմարար կը հետեւէր այս սահմանին: Մեղաւորք, կ'ըսէ Յաճախապատումը, որ «ոչ զանան խոստվանութեամբ յապաշխարութիւն, խրատէ մեծամեծ պատօց արդար գատաւորն»⁴: Աւազանին լուսցումը, կը յաւելու նոյն մատեանը, վերըստին կը ստացուի՝ «ի ձեռն հաւատարիմ և անուան խոստվանութեանն»: որ «զիկրսն բանայ և զցանսն յայտնէ, և զդեղ թժէկութեանն ի վերայ ածէ զզջմամբ»⁵: Այս էր խոստվանութեան եղանակը: և ոչ թէ ընդհանուր մեղաց ցուցակ մը կարգանով, — զոր մեր հին Հարց չէին ճանաչեր, — իւր ցաւերն անոնց մէջ ծածկի՝ փոխանակ բանայու, այսինքն խոստվանութեան ճիշդ հականակը գործել, զոր կը ջատագովէր Օրմանեանը⁶:

Յ. Նոյնաչս ամուսնութիւնը, խորհուրդ քարոզուած Պողոսէ՝ իրուն օրինակ միութեան իկեղեցւոյ ընդ Քրիստոսի⁷, ասոր պէս անլուծանելի կը զաւանէին Հայը

1. Մանդ. 168. — 2. Եղիշէ, 204, 358. — 3. Խոր. Պար. 82. — 4. Լամբ. Պար. 159, 160. — 5. Յ. ի. 22. Մաթ. Փլ., 18. — 6. Յակ. Ե., 16. —

7. Յաճախ. 68. — 8. Յաճախ. 68, 174. — 9. Հայոց Կեդ. 145. — 10. Եպիս. Ե., 82.

առաքելոյն՝ և կաթողիկէ Եկեղեցւոյ հետ։ Հակոսակ այն թուրութեան՝ որ հեթանոսութենէ մասցած էր, մեծն կերսէս, Կ'ըսէ Փաւատոս, Աշտիշատու ժողովով սահմանեց՝ «զի լինիցին յամուսնութեան օրինաւորը, մի՛ ստել և մի՛ զարերելիւրեանց ամուսնութիւննզալ կողմանց»։ այսինքն է երկուսեած հաւատարիմ մասը ամուսնական կապին։ Եւ կը յարէ պատմիչը՝ թէ «յաւուրսն ներսիսի հայրապետին ոչ որ իշխէր ի նմանն նանել կամ բոդոյ զիկի իր զամանին յամենայն երգիրն Հայոց...»։ և ոչ այլ աննել միւսանզամ իշխէր որ համարձակել։ Խակ յեր իւր մասւան՝ Պապի Թոյլտութեամբ տիրեց անկարգութիւնը ժամանակ մը՝ Եզնիկ նոյնպէս հակառակ է ապահարզանի։ «Աստուած, Կ'ըսէ, ի բնէ կարգեաց՝ թէ թողէտ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհեա կնոջ իւրոյ։ Զհեա կնոջ իւրոյ ասէ, և ոչ զհեա կանաց։ Զի և զառաջին սահման բնութեան հաստատեցէ, ասաց տէր ի սուրբ աւետարանն՝ թէ Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեխեսցէ»։ Այսպէս և Մանդակունին՝ Վասն կիորովաց ճառին մէջ մեկնելով Պետրոսի խօսքը, «Արք իմաստութեամբ բնակեսցն ընդ կանայ», կը յարէ։ «Ե ոչ ասելութեամբ ինչ հեռանալ հրամայէ, զի... որ զկինն իւր ասէ, անձնասպան է։ Այլ թէ վասն շատուրութեան որ որւոյ առնիցէ ասոելութիւն ընդ ամուսնու իւրոյ, չըր է առաջի Աստուածոյ»։ ուր ասելուրեամբ անոր յաջորդող կնահանութիւնը կ'իմանայ։

Այսպէս հայ Նեկղեցին իւր առաջին շրջանին սերսի կապուած էր կաթողիկէ Եկեղեցւոյ հետ՝ իրք և մի մարմին և մի հոգի ըստ առաքելական բացառութեան, կամ իրք իւր մօր հետ՝ ըստ Եղիշէի։ կապուած նուիրապետորէն, վարդապետութեամբ ու սրբարար խորհուրդներով, և իւր դրօշին նշանն ըրած էր առաքելոյն

սահմանը, «մի տէր, մի հաւատք, մի մկրուորին»։ Այս սահմանն ամրոցջ պահեց նաև յետ հայրապետական աթոռին անկախութեան, որ գմտութեան արդինց չէր՝ ըսկնց⁴, մինչեւ որ հասաւ եկեղեցական քածանումը,

(Ծարութակելի)

Հ. Վ. Հատուե

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՐՔ

ԱՍՈՎԱԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱԽՐԱՊԱՏԻՒՆԻՆ
ԱՄԻՐՏՈՎԱՅՐԱՅ

(Ծար. տես Բազմ. 1927, էջ 166)

Պատճառ հասկանալոյ զիսանուած դեղերն որ գիւտանդն ստածեն։ և է որ թրիփութիւն այլ առնէ և զմահացու գեղերուն շարութիւնն խափանէ, և ուզնան և կամեցան որ լինեն։ վասն ստածման հիւանդին, և թրիփաց այլ լինի՝ որպէս աւագ մածուննին, և աւագ թրիփան, և մասրի սիտոսն, և զարծն որ է՝ զալիաց, և որ սոցին նման է։ այն պատճառով եղկ այս խառնութին, և այլ շատ պատճառ կայ, որ մէկ մէկ գեղող ստացութիւն չի լինի, և այն թժկառապետի որ կարծող էին, հասկցան և իմացան, որ այս գեղերուս խառնութիւն նշմարիտ է, և այս թժկապետաց թտիրն լաւ է։

Թէ մարդ ի նաև մտնելու լինիս, գ. որ յառաջ հանց կերպուր պիսի՝ որ զլսուամոն յաւագույնէ, որպէս սերկնելի շարապ, խնծորի, զարծլի, նուան, ազուրի, որն որ լինի՝ որ զրուամոնին ի վերքերութենէ պահէ։ Եղի՛ և քաղցրէ պատրաստ կալ, առջի օրն երբ մտե՞ ի ծով մը հայիր, և հաս մի՛ անուուլ։

Ներորդն՝ որ յիշենք՝ զկիորքն, և զահմանակն, առ. զեղերուն, և զիսանուած դեղերուն զօմուութիւն՝ որ չկայ ի մէկ մէկ զեղերն, և ի հասնուած դեղերն՝ զօրութիւն մի կայ, որ ի յայլ ցեղ զեղեր՝ որ առ. առնուին, և այլ ուժով այն է, որ մէկ զօդվածի համար լինի, և հանց ստածութիւն լինի զօրուածին՝ որ ի ըստամոքէն հեռու լինի, և պատէն է՝ որ իր օգտութիւն պատուական է և ընդունելի է, և խառնուած է յիրար. բայց ասկից շատ տաշք՝ և ի վերա այսոր այլ իւր մի՛ տար ի գեղէն որ զուժն վվատութէ։ Եւ

1. Ա Կոր. է, 11. — 2. Փաւս. 76. — 3. Փաւս. 229. 4. Եղիշէ, 81. — 5. Մանդ. 188. — 6. Բազմ. 1926, 194-5.